

գար թագաւորը աւելի եռանդ ունե-
 նար հետամուտ լինելու ստուգել ՚ի
 թիւս ազգաց և մեր նախնւոյն հայկայ
 աստուածապաշտութիւնը մինչև կռա-
 պաշտութեան ՚ի հայաստան մտնելը Լ-
 րայի օրէնքն. ինքը հայոց ածապաշտու-
 թեան ծայրը լինելով և քրիստոնէու-
 թեան անդրանիկ թագաւոր ազգին, ա-
 ւելի ևս եռանդով գտնելու հետամուտ
 կ'լինէր իր ազգին նախնի աստուածապաշ-
 տութեան ծայրը, և նորանով գոհ կը-
 լինէր, եր իրեն ազգը սկզբէն ճշմարիտ
 աստուած որ կը պաշտէր, նոյն ճշմարիտ
 աստուածապաշտութեանը ինքն եղաւ ա-
 ռաջնորդ:

Իսկ մեր խնդիրը այսպէս կ'լուծանէ
 սոյն պատմագիր. "Սմանք ասեն զ՛Նեբ-
 րովթ յաշտարակին անկմանէ մեռանիլ,
 բայց մեք ստուգեցաք յետ ժամանակի
 սպանիլ նմա ՚ի հայկայ որդւոյ Սորգո-
 մայ որդւոյ Սիրասայ, որդւոյ Վամիրայ
 որդւոյ (Հաբեթի. զի ոչ արար հայկն ըզ-
 պատկեր Ռելայ և համարեցաւ զնա ած.
 և եկն Ռէլ ՚ի վերայ նորա ծանր ամ-
 բոխիւ և սպան զնս հայկ":

Ըզգային պատմիչներէն՝ այս բանիս
 վկայ կ'երևին Սիսիթար գոշ և Սար-
 դան բարձրբերդցի, որոնք կ'գրեն հայ-
 կայ համար, որ Ռելայ պատկերը չպաշտե-
 լու համար՝ նորանից ապստամբեցաւ, և
 կենազրաւ եղաւ նորան:

Հարունս/իելի:

Խաչիկ Կարուղիկոսի առաջնոյ Կոնդակը փրկա-
 կան 976. րուին

Խաչիկ Կաթուղիկոս առաջինն է սա,
 ինչպէս Կոնդակի թուականը ցոյց կտայ
 որ յամին 972. յեպիսկոպոսութենէ,
 Լ. ըշարունեաց ընտրեցաւ կաթուղիկոս
 աշխային ժողովով հրամանաւ երրորդն
 Լ՛ըտ թագաւորի, Լ՛նի արքայանիստ մայ-
 րաքաղաքին մէջ Ստեփաննոս կաթուղի-
 կոսի մահուանէն ետք, որ Լ. ըծրունեաց
 Լ՛բուսահլ թագաւորը պստրեց ՚ի Սո-
 տորոց ասացեալ բերդը ՚ի Սասպուրա-
 կան:

Իւրեքէն զոր եպիսկոպոս կ'ձեռնադրէ
 Խաչիկ Կաթուղիկոս՝ Կախավկայի թեմի
 վրա՝ Սահան կաթուղիկոսի պատմու-
 անքէն կ'երևի, որ կուսակից էր կա-
 թուղիկոսին՝ Սահանը ՚ի կաթուղիկ-
 սութենէ ձգելու ժամանակին. ուստի
 երբ որ 971 թուին Ստեփաննոս կաթու-
 ղիկոսը գնաց Սասպուրական բազմու-
 թեամբ կրօնաւորաց, ուր փախած էր
 Սահան, նորա հետ էր և այս Իւրեքէն
 վանական կոչեցեալ Սիւնեցի:

Սասպուրական նահանգի այն մասն
 էլ, ուր է Ս. Ստեփաննոս նախավկայի
 վանքը, Սիւնեաց նահանգին յարևմտից
 սահմանակից լինելով, որում հաւանա-
 կան է թէ աւելի ծանօթ լինէր Իւրեքէն
 և վանահայր նախավկայի վանքին, յիշեալ
 մասին վրա կաթուղիկոսը եպիսկոպոս կը
 ձեռնադրէ զԻւրեքէն իւր իշխանու-

Թեան չորրորդ տարին նրան վիճակ և
 Թեմ կ'հաստատէ Մշտ Թագաւորի
 հրամանաւ Վախճեանայ գաւառը հե-
 տեւալ կոնդակով որ արեւելեան մասն է
 Սասաւորական նահանգի այս կոնդակն
 է որ ութ հազար իննսուն և երկու տա-
 րուան աղագային իբրև մէկ հազուագիււտ
 հնութիւն կ'փութանք հրասարակել
 Մնագրիս միջոցաւ 'ի տեղեկութիւն
 Մշտայնոց, ուրիշ Ժամանակի թող տա-
 լով քննութիւն առնել կոնդակի գրը-
 չութեան վրա և իրաջիկ կաթուղիկոսի
 կենսագրութիւն և գործքերը գրել :

Մտաւմբ անեղին Մտուծոյ Հաւր և
 'ի փառս ծնելոյն 'ի նմանէ անեղապէս
 որդւոյն միածնի և 'ի փառս բղխեցելոյն
 յեութենէ Հոգւոյն ճշմարտի, Մ յս մեր
 գիր հոգևորական բարձր հրամանի հա-
 տատութիւն է և աւրհնութիւն և 'ի
 հոգևոր հովուութեան Տեառն իրաջկայ
 Հայոց կաթուղիկոսի, և հարաւոյ Հայոց
 Թագաւոր Մշտ յորջորջեալ անուամբ
 բարեպաշտ և մեծ Մհանջահի. Սս
 Մշտ Թագաւոր Թագաւորաց ամենայն
 տիեզերաց, եկեալ 'ի սուրբ ուխտս աս-
 տուածաբնակ Վախճեանի հանդերձ
 զաւրաւքս՝ Թագաւորաւք և իշխանաւք
 Տեառն իրաջկայ Հայոց կաթուղիկոսի՝
 երկրորդեալ սուրբ տաճարիս հին Սա-
 ղարդայ վանից, երանելի կրանաւորս
 աստուածամեծար մեծանուն Տեառն
 Բարգեճի հայկազնոյ նախաշինաւղ և 'ի
 Վրիստոս ծնաւղ հոգևոր գործանց . .

մանկանց եկեղեցւոյ և բարձր հրամանի
 բարեպաշտ Թագաւորի և Տեառն իրաջ-
 կայ Հայոց կաթուղիկոսի, եղև ձեռնա-
 գրեալ Մրքեպիսկոպոսապետն ի ե տո-
 մարիս Մրամեան մնացուածիս՝ եղև կա-
 տարու մն շինութեան և նորոգութեան
 Մտուածաբնակ սուրբ Վախճեանի
 ջանիւք և աշխատութեամբ Տեառն
 Բարգեճի որ էր աս շինեալ սուրբ առա-
 քելոյն Բարգուղիմէոսի և 'ի սուրբ Տա-
 ճարիս կոյ հանգուցեալ սեւեռեալ բե-
 լեռն բազկացն Յիսուսի և արքայական
 Թագից փուշ պսակէն ճիւղ մի. և 'ի
 Վրիստոսի ձեռաց գ. հատ մանանայն, և
 'ի բազմահաւք սրբութեանցս որ աստ
 կան հաւաքեալ, Սս ետու հնձէքս և հայ-
 բենիքս և դաստակերտ և ընծայ անհին
 Սողարդայ վանաց սուրբ Ստեփաննոս
 նախավային, Տերամայր սուրբ Մտուա-
 ծածնին, և սուրբ Վեորգ զաւրավարին
 անդառնալի և բարձր հրամանաւ մերով
 Թեմ և վիճակ, զոր և սահմանեալ էր
 նախնեացն մերոց և սուրբ հայրապետա-
 ցրն մերոց Տեառն Ներսիսի թուին մե-
 րոյ սուրբ Մուսաւորչին, Վախ առաջին
 խոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն
 Վախճեան 'ի իրգ գաւառն բոլորովին,
 'ի իւր որ է Օրեանդ գաւառ և ա-
 մենայն վիճակն իւր բոլորովին, մինչ 'ի
 Վուան 'ի Վարադայն, որ բաժանի Մ-
 ուքելոց յերկրէն և գնայ մինչև 'ի Վա-
 րաթափան, և բաժանի 'ի Սարմատայ,
 'ի յարափայ մինչև 'ի Սարանդ . . .
 Սարանդ իւր վիճակովն իշխնութան իւր
 երկրովն գնայ մինչ 'ի դղեակն իսորո-

վու, ՚ի յՆ՝ զատ և ՚ի Վերան. ՚ի Տ՝ զու-
 զայ և իւր վանքն. ՚ի յՆ՝ ստապատ և իւր
 վանքն, ՚ի Շ՝ ամբ և իւր վանքն, ՚ի Տ՝ ար-
 զացտեղն, ՚ի յՆ՝ րարքն և իւր վանքն և
 յամենայն Վիտապաւլացդ յարեւելեան
 հարաւոյ, տուաք ընծայ և հայրենիք ան-
 դառնալի և բարձր հրամանաւ մինչև ՚ի
 գալուստն Վրիստոսի և ասեղ դատաս-
 տանն, և մի որ իշխեսցէ ՚ի մեծաց և ՚ի փո-
 քունց արգել առնուլ կամ խաւսել չար
 բան, և որք ՚ի ժամանակի ժամանակի կան
 ՚ի պաշտաւն սրբութեան, անմոռաց յիշել
 պարտիք ՚ի Վրիստոս, Նաւ յայսմ հետէ ՚ի
 գաւառաց սահմանեալ թեմէն և վիճակէն
 Վիտապաւլաց աղբիորդաց կամ տանու-
 տեարք յերկրէն կամ գեղջէն մեծ մարդ
 կամ փոքր այս սահմանեալ թեմիս և վիճա-
 կիս և յամենայն անդատանաց և ամենայն
 արմալք և իրաւունք որ տալ կամին ՚ի յՆ՝ ս-
 տուծոյ և յՆ՝ թոռոյս որք ջանան հարկս
 պահանջել կամ ընդ չարով առնել, այն-
 պիտիքն նդովեալ եղիցին յ. Ժ. Ը. Հայ-
 րապետացն, վարձքն զլորիսայ և զՎա-
 դանայ առցեն, մասն և բաժին ընդ Յու-
 դայի և ընդ կայենի և խաչահանուացն
 եղիցի ամէն, Նաւ աւարտումն եղև բա-
 նիս և գրիս ձեռամբ մեծանուն հեռուն
 Սաղկայ կաթուղիկոսի ամենայն Հայոց
 և տէր Վաբգեհի և մեծ իշխանացն Վալ-
 զարիսի իշխանի Հայոց և Ս՝ րաց, Ս՝ ր-
 սակ իշխանի Սիւնեաց, Վրիգոր իշխանի
 Սշտունեաց, Վեորգ իշխանի Վանուն-
 եաց, Շ՝ ապուհ իշխանի Վրժբունեաց,
 նամակիս և Սիկիլիո կատարողքն աւրհնին
 յՆ՝ ստուծոյ և յամենայն սրբոց, և խախա-

նիչքն դատին ՚ի Վրիստոսէ Մտուծոյ
 մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն,
 հեռուն Սաղկայ կաթուղիկոսի ամենայն
 Հայոց Վատրիարգ առաքելական հաս-
 առաքեցաք գրաւորական աւրհնութե
 հրամանաւ մեծանուն երջանիկ Տ՝ Վաբ-
 գէն Վաբգեպիսկոպոս գալ առ ձեղ և առա-
 քելաբար շրջեսցի ընդ միջի ձերում վար-
 դապետել իրատել և ուսուցանել ՚ի յա-
 րէնս և ՚ի պատուիրանս հեռուն. կալ յանա-
 րատութեան ՚ի տուէ և ՚ի գիշերի, տալով
 զանձն աւրինակ ձեզ ամենեցուն ինքն ա-
 րասցէ և ձեզ ուսուսցէ սրբութեամբ,
 արդարութեամբ, խոնարհութեամբ և եր-
 կիւղիւ սիրովն առ Մտուծ և առ ըն-
 կերս իւր եղբայրսիրութեամբ, աղքատ-
 սիրութեամբ, ողորմածութեամբ, և ա-
 զաւթիւք. ինել այցելու որբոց և այր-
 եաց, տնանկաց և կարաւտելոց կարեկից
 սիրովն Վրիստոսի, կոչեսցէ զարժանա-
 ւորան և զմաստունան ՚ի կարգ և յաստի-
 ճան կիսասարկաւագուէ, և քահանայու-
 թեան, կայցի և հրամանաւս մերով ՚ի վե-
 րայ ձեր իշխանութի առաքելական կապել
 և արձակել յերկինս և յերկրի, զմեղու-
 ցեալն կշտամբել և յանդիմանել և զող-
 ջացեալն ընդունել յապաշխարուի, ո-
 րով և դուք ամենեքեան սիրելի որդիք ՚ի
 Վրիստոս, զածապատիւ և զառաքելա-
 շնորհ Վաբգեպիսկոպոս մեծանուն հէր
 Վաբգէն մեծաւ պատուով յոյժ սիրով
 ընկալարուք որպէս հրեշտակ Ս՝ Յ և զա-
 ուքեալ Վրիստոսի, և ամենայն հոգևո-
 րական խրատուց դորա, որ ՚ի շահ և աւ-
 գուտ է հոգևոց ձերոց, հնալանդուէ մբ

ունկնդիր լերուք: Մէկ կանոնեալ հասե զիրաւունք զոր պարտիք տալ յՄստու ծոյ՝ բաժին Մթոռոյ, զհաս տանց քահա նայից և զամբնտանեաց նոցա, զերխայրիս հնձանոց, զտեառնականս, զխաչուրհ նէքնսն և զսրբանուէրս զիրաւունս մատաղաց, կենդանեաց և ննջեցելոց, բազմականս և զանկարծառնս և զառականս, և սամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ՚ի ձեռս դորա զուարթ և առատ զի զտուրս զուարթ և առատ սիրէ Մստուած: Եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ սմա և հրամանիս մեր, և արգելցէ իրաւունք տալոյ կամ խորեացէ, կամ (առ) աւագ անկանի և յուշ հատուցանէ սուրբ նախավկային վանաց, զի որ ոք դմա, կամ հրամանիս մեր հակառակ լիցի, նա այնպիսին է ընդ անիծաւք, ներքոյ բանադրանաց, զանէծան ի պենի առցէ յՄստուծոյ, զմասն ՝ Յուդայի և զխաչահանուացն: Որով աւրհնեալքն ՚ի դմանէ՝ աւրհնեալ եղիցին յՄստուծոյ կապեալքն ՚ի նմին մնացեն մինչև զզջասցին: Սանորոյ ՚ի մտանել դորա և հոգևորական բարձր հրամանիս մերոյ առ ձեզ և սուրբ Սիովնիս՝ իջցէ և շնորհք ողորմութեան Մստուծոյ յերկնից ՚ի վերայ ձեր եւթնպատիկ լցուսցէ զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարութեամբ բարձցէ ՚ի ձէնջ զամենայն ցասումն և զպատուհաս և զտարածամ մահ յաշխարհէ ձեր տացէ և ձեզ շինուի, անդորրութի խաղաղութի, բուսոց և տնկոց և ամ անդէոց ձեր յաջողութի և քաղցր պտղաբերութի պաճարեղէն անասնոց ձեր անսխալ ծննդա

կանութի և ամ բարեայ ձեր իսուի և առատութի: Եւ աւրհնեացէ զձեզ զամենսեան Վս Մթ մեր, որպէս զի զառարեայ կեանս վայելիցէք և երկնից արքայութե և թագաւորութե հասանիցէք ընդամստուրբս ՚ի Վս ՝ Յս ՚ի տէր մեր որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն: Շնորհեցաք ՚ի ձեռն դորա ձեզ պարգևս հոգևորական զեղն աւրհնութեան սրբալոյս և զաստուածագործակ սուրբ տանն ՚ի լուսաւորութի նորածնելոցն աւագանաւ յորդեգրութի շաւրն երկնաւորի և ՚ի ժառանգակցութի Վրիստոսի Մստուծոյ յուսոյն մերոյ, զնոյն ՚ի ճակատն նշան հաստատութե, յաւծումն քահանայութե ՚ի նորագութի սքեկեղեցոյ Վրիստոսի Մստուծոյ մերոյ աւրհնելոյն յամենայն յաւիտեանս ամէն:

— Իյաչիկ ծառայ ՝ Յիսուսի Վրիստոսի շնորհաւք և ողորմութեամբ նորին ի յաթուղիկոս ամենայն հայոց:

— Ղարեցաւ ձեռամբ Մգաթանգեղ դպրի Ն. Ի. Լ. հումարի Մրամեան մնացուածի:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Երազրութեանց Սիմոնի Ս. Եշմիսանի:

Ի 14. յունիսի. նշանակեցաւ ՚ի պաշտօն ծառայողի Սիմոնի Ս. Եշմիսանի՝ արտաքոյ շտատի, և հաւատարմատար վասն վիճելի Մթոռապատկան կալուածոց Տիխիսեցի Մստիճանաւոր Պ. Յովհաննէսն Սկրտչեան ՝ յովնաթանեանց: